



Հ. ԱՄԱՆՅԱՆ

ՄԱԿԱԲԱՅԵՅՎՈՅ ԳՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ*

Բնագրային նմանությունները քննելիս պետք է նկատի ունենալ համեմատվող երկու բնագրերի փաստերը և ցույց տալ ո՞րն է աղբյուրի աղբյուրները, որովհետև նույնիսկ միևնույն հեղինակի գրչին պատկանող տարբեր գործեր կարող են երևան համեմատելի միայն ո՞րն է աղբյուրի աղբյուրները ու անհետևողականություն, այլև ուրիշ տարբերություններ: Առավել ևս միևնույն ո՞րն է աղբյուրի աղբյուրները: Հետևաբար, դժվար է հաստատել բավականաչափ համոզիչ նմանություն, սեղ էլ միջնորդավորված կերպով, երբ բնագրերի աղբյուրները անմիջական համեմատության արդյունք չեն, այլ հիմնվում են ուրիշ բնագրերի վրա: Հենց այդ են ցույց տալիս վերևում նշված թվերը. երկու բնագրերը կարող են աղբյուրակից լինել, սակայն երրորդի հետ նրանցից յուրաքանչյուրը կարող է ունենալ բոլորովին տարբեր չափի ու բնույթի աղբյուրներ: Ուստի, մենք մի կողմ թողնելով մյուս բնագրերի առնչությունները՝ ստորև կքննենք Կորյունի երկի և Մակաբայեցվոց գրքերի լեզվաոճական աղբյուրների հարցը:

Դիտարկենք Կորյունի և Մակաբայեցվոց բնագրերից բաղկած այն օրինակները, որոնք Ն. Բյուզանդացին բերում է այդ երկերի հարազատությունը և դրանց միևնույն հեղինակի գրչին պատկանելի հաստատելու համար.

1. Ի միտ արկանեն

Կորյուն՝ հոգ ի միտ արկանել

Մակաբ. գործ ի միտ արկանել

Միտ բառի նախդրով տրականի և հայցականի հոլովածները հաճախ են հանդիպում **արկանեն, առնեն, դեն, ունեն** և այլ բայերի կապակցությամբ: Դրանք հանդիպում են նաև Աստվածաշնչի մյուս գրքերում (օրինակ՝ Երեմ. 12, 25), Բուզանդի ու Փարպեցու բնագրերում, ինչպես նշում է Ն. Բյուզանդացին (էջ 16): Ի միտ արկանեն կապակցությունը կալում է, բավականին տարածված և Կորյունի ու Մակաբայեցվոց գրքերի ոճական նմանությունը վկայող հուսալի փաստ չէ: Գուցե Մակաբայեցվոց անհայտ թարգմանիչը, նաև Կորյունն այն վերցրել են հենց **Երեմիայի մարգարետության** բնագրից:

2. Կորյուն՝ ի նոյն հոգս դառնամ

Մակաբ. ի նոյն խնդրուածս դառնամ

3. Մակաբ. և Կորյուն՝ դայեկաբար սնուցանել

4. Ցանձն առնեն աստուծոյ

Կորյուն՝ Ցանձն առնելով զնոսա և զանձն՝ ամենապահ շնորհացն աստուծոյ (էջ 72): Պարապեալ զանձն ու զմնացեալս՝ ամենապահ շնորհացն աստուծոյ (էջ 88):

Ցանձն արարեալ շնորհացն Աստուծոյ (էջ 70)

Ցանձն առնել շնորհացն Աստուծոյ (էջ 92)

Ցանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ (էջ 60)⁶⁵:

Գործք առաք. Ցանձն առնեն զնեզ Աստուծոյ (Ի, 32)

Ցանձն արարին զնոսա տեսուն (ԺԴ, 32)

Լին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ (ԺԴ, 25)

* Ընդունված «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի № Ա-ից:

⁶⁵ Բաղվածքները վերցված են Կորյունի վերևում նշված երկից:

Յանձն արարեալ շնորհացն աստուծոյ (ԺԵ, 40) Մակաբ. յանձն առնէր աստուծոյ զանձն և զգօրսն (Բ, ԺԳ, 15)

Ինչպէս տեսնում ենք՝ յանձն առնեմ աստուծոյ կապակցություններով նախադասությունները Կորյունի բնագրում ավելի ընդարձակ են, տարբերվում են մյուս երկու բնագրերի մոյն միավորներից. ըստ այդմ **Գործք առաքելոցը** կարծես միջին դիրք ունի և միտում է ենթադրել, որ հենց ինքն է Կորյունի և Մակաբայեցվոց գրքերի փոխատու աղբյուրը:

5. **Խոտաբուստ** բառը, որ միայն բուստ արմատով հանդես է գալիս նաև այլ հեղինակների մոտ, Կորյունը և Մակաբայեցվոց թարգմանիչը հավանաբար գործածում են իրարից անկախ, չի կարելի ասել, թե նրանցից ով է ընդօրինակողը:

6. Կորյունի բարեացապարտ և Մակաբայեցվոց չարեացապարտ հակամիջները, իրոք, մնան կազմություններ են, սակայն այստեղ էլ չենք կարող զանազանել բառաբարդությունը կերտողին ընդօրինակողից:

Ակնհայտ է, որ Ն. Բյուզանդացու քերած օրինակները, որպես հիմնական փաստեր Կորյունի և Մակաբայեցվոց լեզվական ու ոճական մոլորություննր ցույց տալու համար, դեռևս հեռու են բավարար ու համոզիչ լինելուց:

Ուշադրության առնենք նաև Կորյունի և Մակաբայեցվոց բնագրին վերաբերող այն օրինակները, որոնք Ն. Բյուզանդացին բերում է Կորյունի և մյուս բնագրի առնչությամբ: Դրանց մեջ Մակաբայեցվոց բնագիրը Ագաթանգեղոսի բնագրի հետ հանդիպում է 11, Բուզանդի բնագրի հետ՝ 4, իսկ Եւթաղի բնագրի հետ աղերս չունի: Այդ օրինակներն են՝ (Կորյուն և Ագաթանգեղոս) 5. հրամանին, թշուառութենաց (պատուհան) հասնելու, եկելոց հասնելոց, 6. առանց յապաղելոյ, 19. սոյն արիմակ, 34. միզակակից, 44. դուռն թագաւորին, 58. գումարեմ, 61. համբերեալ, պատրաստեալ, 71. աւագանի, 74. ծանաւք կացուցանեմ, 79. անծանաւք կացուցանեմ, 75. աստուածագործ, 105. թողում վերակացու, պահապան թողում, 122. ծածկախիթ լինիմ, առնեմ ամբախիթ, (Կորյուն և Բուզանդ) 4. խոստացեալն, խոստացեալքն, 22. երթեալ յանդիման լինիմ թագաւորին, 11. հարցանեմ և քննեմ, 14. ճարն ածեմ⁶⁹:

Վերոհիշյալ օրինակները՝ դերբայական ձևեր, առանձին բառեր (բայ, գոյական, ածական), բառակապակցություններ և այլն, միայն Կորյունին ու նրան վերագրվող թարգմանություններին հատուկ լեզվաոճական միավորներ չեն և հանդիպում են նաև 5-րդ դ. բնագրերի մյուս ոճային դարերում, ինչպէս քանիցս նշում է Ն. Բյուզանդացին իր քննությունների վերջում տրվող դիտողություններում (տե՛ս, օրինակ, Կոր. և Ագաթ. 5, 6, 19, 34, 41, 58, 61, 75): Բերված օրինակներից մոյն արիմակ, սոյն արիմակ, միզակակից, աւագանի և այլն, որոնք հանդիպում են նաև շատ այլ բնագրե-

րում, ըստ Ն. Բյուզանդացու բաժանման, Կորյունյան դասի գրվածքների համար որոշիչ ու առանձնահատուկ միավորներ համարելը մեր կարծիքով միշտ չի լինի: Դրանք, հասնելայն դեպ, չունեն այն համոզությունը, ինչ ասենք, համբերեալ, պատրաստեալ (61) օրինակը. դիմավոր բայի փոխարեն անցյալ դերբայի գործածությունը, իրոք, հատուկ է Կորյունի ոճին: Մակաբայեցվոց բնագրում էլ հանդիպում է այդ երևույթը, սակայն ցայտուն չէ: Կամ՝ թողում, կացուցանեմ բայերի և գոյականների կապակցություններում Կորյունն ու Բուզանդը բայը դնում են նաև դերբայի ձևով (թողեալ վերակացու, թողեալ տեսչւն), միմյնեմ Մակաբայեցվոց բնագրում, որտեղ բայը գերազանցապես կոտորած է, չի հանդիպում դերբայական ձևով: Վերևում բերված 16 օրինակների մի մասը համոզիչ չէ և եթե բոլոր՝ 22 օրինակներն էլ անաւարկելի լինեն, այնուամենայնիվ դա էլ բավարար չէ Կորյունին Մակաբայեցվոց գրքերի թարգմանիչ ճանաչելու Ն. Բյուզանդացու տեսակետը հաստատելու համար:

Կորյունի «Վարք Մաշտոցի» և Մակաբայեցվոց գրքերի բնագրերից կարելի է բերել անհամեմատ շատ օրինակներ՝ ցույց տալու համար, որ այդ երկերը լեզվաոճական միևնույն կերպարանքը չունեն: Ահավասիկ մի քանիսը՝ Կորյուն—Մակաբայեցիք կարգով. փոյթ արարեալ (էջ 36), փոյթ առնել (էջ 44), փոյթ ի վերայ ունեղով (էջ 60) և փոյթ կալել (Բ. Մակ. է, 30), հանգեալ (էջ 94) և մեկնեցալ յաշխարհէ (Բ Մակ. է, 42), փութով (էջ 72) փութանակի (էջ 44) և տագնապալ (Բ Մակ. Թ, 9, 10). փախստական (լինելով) (էջ 40) և փախըստեալ լինէին (Ա Մակ. Ե, 5, 34, 43, Ժ, 12, Բ Մակ. Ը, 25, 30, Թ, 8 և այլն), ազդ լինել (էջ 54, 82) և ազդ եղև (Ա Մակ. Ե 34), ի միջոյ (էջ 86, 92) և ի միջոյ անտի (Ա Մակ. է, 6, 2, 23, Ը, 4, 17, Թ, 48, ԺԱ, 23, ԺԳ, 42 և այլն): Կորյունն առհասարակ չի գործածում յոյժ, կարի, անհնարին մակբայները, միմյնեմ Մակաբայեցվոց գրքերում դրանք լայն գործածություն ունեն որպես վերադիրներ և ածականի գերադրական աստիճան կազմող բաղադրիչներ: Անուանեալ կոչիմ կապակցությունը Կորյունը (էջ 62, 64, 74, 88) երբեք չի գործածում դիմավոր բայի կոչի ձևով, իսկ Մակաբայեցվոց բնագրում կա նաև անուանեալ կոչի (Ա Մակ. Ա. 87), անուանեալ կոչին (Ա Մակ. ԺԳ. 40) և այլն: Խաղամ գնամ, խաղացեալ գնամ հարադիրների հետ Կորյունը ոչ մի տեղ հավելադրությամբ չի գործածում դիմեմ, չու առնեմ, չունեմ բայերը, ինչ տվորական է Մակաբայեցվոց գրքերի համար: Եթե Կորյունը խրթմաբան է, նրա շարադրանքում կան մութ, մանվածապատ, դժվարընկալելի տեղեր, ապա Մակաբայեցվոց բնագիրը համեմատաբար պարզ է, նրա հայ թարգմանիչն ստավել հորդաբան է: Նման օրինակներ շատ կարելի է բերել, մանավանդ, որ արդեն ձեռքի տակ են Մակաբայեցվոց գրքերի ձևագրերի տարբերակները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու ոճական նրբու-

⁶⁹ Տե՛ս Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 164:

թյունները, խորին ու կապածելի երևույթները: Տարբերակվածները շատ կարևոր են, մասնավորապես այն դեպքում, երբ հեղինակային բնօրինակը համեմատվում է թարգմանության հետ, որն ինչ-որ չափով, այնուամենայնիվ պիտի որ ժառանգի իր բնօրինակի լեզվաճանապարհը:

Ե. Դուրյանը, հատուկ քննություններ չկատարելով, քննում է, որ Մակարայեցվոց թարգմանիչը Կորյունն է⁷⁰: Գ. Ֆնտզյանը համաձայնելով Ն. Բյուզանդացուն, վկայակոչում է նոր բնագրային փաստեր⁷¹, որոնք ապացուցման մեծ ուժ չունեն և հիմնովի առարկում են Ն. Աղոնցի կողմից⁷²: Ծովակաճը (Ն. Պողարյան) նույնպես, պաշտպանելով Ն. Բյուզանդացու տեսակետը, քննադատում է Ա. Կոզյանին, որը «Մակարայեցուց թարգմանությունը Կորիւնի գործ չի համարի»⁷³: Ապա նա անցնում է իր «բուն մտադրության, որ է ցոյց տալ Կորիւնի և Մակարայեցուց հայ թարգմանիչն իրարու հետ ունեցած սերտ աղերսը և անձերու նույնության մասին նորաբերան տեսությունը Վեմ հաւանականութիւնը»⁷⁴: Ամփոփելով Ն. Բյուզանդացու և Գ. Ֆնտզյանի օրինակները, Ծովակաճը դրանց ավելացնում է նոր փաստեր: Նա նմանություններ է տեսնում նաև Կորյունի և Մակարայեցվոց նախադրությունների բնագրերում. «Մեր կողմէ,—գրում է նա,—կը կցենք նաև մի քանի կարևոր նմանություններ Կորիւնի և Մակարայեցուց գրքերում նախադրության միջև, որոնք բառարար նշան կրնան համարիլ, թէ սոյն նախադրություններն ալ Մակարայեցուց թարգմանիչ Կորիւնի գրչէն եղած են»⁷⁵: Նա օրինակների միջոցով, ուշադրություն է հրավիրում Կորյունին հատուկ բառերի, բառակապակցությունների, այլև հոմանիշների կուտակումների վրա: Հոլովածի վերջում Ծովակաճը գրում է. «Այս բոլոր տուեալները գումարելով—առանց առայժմ խառնելու Եթաղը, Ագաթանգեղոսն ու Փաստոսը—կարծեմ ներելի է եզրակացնել, թէ Մակարայեցուց երեք գրքերուն, նախադրութիւններով և զվականագութիւններով հանդերձ, հայ թարգմանիչն է Կորիւն»⁷⁶:

Վերահիշյալ կարծիքները, որոնք հաստատում են Ն. Բյուզանդացու տեսությունը և լրացուցիչ փաստարկների վկայակոչումով ձգտում են ամրապնդել

այն, բնագրերի ու դրանց գրչագրերի համեմատական հետազոտության խորը ու համակողմանի աշխատանքի արդյունք չեն, ուստի չեն կարող ընդունվել որպես լիարժեք գիտական եզրակացություններ:

Մակարայեցվոց Բ գրքին նվիրված արձևատրոս բնական ուսումնասիրություն է Ա. Կոզյանի աշխատությունը, որն արդեն հիշատակվել է վերևում: Հեղինակն ի թիվս բազմաթիվ հարցերի քննում է նաև Մակարայեցվոց գրքի թարգմանչի հարցը և ցույց է տալիս, որ Կորյունին չի կարելի այդ գրքի թարգմանիչ համարել: Նա գրում է. «Ագաթանգեղոս, Բիզանդ, Եթաղ մեր խնդրէն դուրս են, իսկ Մակարայեցիք Կորեան թարգմանութիւն չենք համարիր, վասն զի նորայրեան չորս կետերը գրական աշխատության մը հեղինակը որոշելու աստիճան իրականացած չենք գտներ Մակարայեցուց մեջ»⁷⁷: Իր կարծիքն հաստատելու համար, Մակարայեցվոց գրքերի լեզվաճանապարհ մի շարք առանձնահատկություններ նշելուց հետո, նա Կորյունի բնագրից բերում է բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ *իճքնին իճխանն, անթիւ անհամար, իրքն այն, ի վերայ հասանն, հարցանքն քննելն, եռանդն իմն անէին*, և այլն, որոնք սակավ գործածություն ունեն Մակարայեցվոց գրքում և նույն հաճախականությամբ հանդիպում են նաև *Եսայի, Գ. Թագ., Եզր, Եսթեր* և մյուս գրքերում, իսկ Կորյունի սիրած բառերը՝ *բանիցդ խոստացելոց, խոստացեալսն, դառադաս, հիզակակից* և այլն Մակարայեցվոց թարգմանիչը գործածում է այլ իմաստներով⁷⁸: Ա. Կոզյանի կարծիքը, թե «Մակարայեցուց թարգմանիչը տկար է լուրարելի մեջ», խիստ է, բայց որ թարգմանիչը Կորյունի աստիճանի խրթնաբան չէ, դա միանգամայն ճիշտ է:

Գիտականորեն ճիշտ տեսակետից է մեկնաբանում Կորյունին հատկացվող թարգմանությունների հարցը Ն. Աղոնցը: Ընդունելով Կորյունի, Ագաթանգեղոսի, Եթաղի և Մակարայեցվոց գրքերի աղբյուրությունների գոյությունը՝ նա դրանց փոխհարաբերությունները համարում է խորհրդավոր և միևնույն գրչին պատկանելի⁷⁹ կասկածելի⁸⁰ և լեզվական նմանությունները բացատրում փոխազդեցությամբ: Նա գրում է. «Ինչ վերաբերում է Եթաղին և Մակարայեցուց գրքին, բառարար հիմք չկայ սրանց թարգմանությունը Կորիւնին վերագրելու: Թվում է, թէ լեզուական և ոճային խնամությունը բացատրելու է նրանով, որ Կորիւնն է կրում նրանց ազդեցությունը»⁸¹: Այնուհետև, Եթաղի առթիվ նա վճռականորեն ասում է՝ «Կորիւն չէ Եթաղի թարգմանը: Նմանությունը արդիւնք է բանքադրության»⁸² և՛

⁷⁰ Տե՛ս *Նդիշէ պատրիարք Դուրյան*, Ամբողջ երկեր, 2, էջ 360:

⁷¹ Տե՛ս *Գ. Ֆնտզյան*, Պատասխան պրոֆ. Աղոնցին, «Հանդէս ամսօրեայ», 1927, Թ. 9, էջ 534: Տե՛ս նաև նրա՝ «Նկատողություններ Մաշտոց-Մաքրով անուան և Կորեան բնագրի և ժամանակի մասին. «Հանդէս ամսօրեայ», 1926, Թ. 5—6, էջ 268—275:

⁷² Տե՛ս *Ն. Աղոնց*, Դարձեալ Կորիւնի շուրջը. «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 76—94:

⁷³ *Ծովակաճ*, Կորիւն և Մակարայեցուց հայ թարգմանիչը. «Սիւն», 1935, № 6, էջ 181:

⁷⁴ Նույն տեղում, էջ 181:

⁷⁵ Նույն տեղում, էջ 181:

⁷⁶ Նույն տեղում, էջ 187:

⁷⁷ Ա. Կոզյան, նշվ. աշխ., էջ 19:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 19—22:

⁷⁹ Տե՛ս *Ն. Աղոնց*, Դարձեալ Կորիւնի շուրջը. «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 91:

⁸⁰ Նույն տեղում, էջ 91—92:

⁸¹ Նույն տեղում, էջ 92:

«Նոյնը կարելի է ասել ևս Մակաբայեցուց գրքի մասին, որ դժուար թե Կորնիլի գործ լինի»⁸²:

Կորնիլին վերագրվող թարգմանությունների վերաբերյալ համառոտակի արտահայտվել է նաև Մ. Արեղյանը: Նա «Վարք Մաշտոցի» իր աշխատասիրության առաջաբանում նշում է, որ Կորնիլի աշխատանքն են համարում Կյուրեղ Երուսաղեմացու թարգմանությունը և Ն. Բյուզանդացին բառերի ու դարձվածների վրա հիմնվելով, նրան է վերագրում նաև ուրիշ թարգմանություններ, «քայց այդ երկրպետի է, մասամբ և բոլորովին մերժելի»⁸³:

Հայ բանասիրության մեջ, Կորնիլից բացի, Մակաբայեցուց գրքերը վերագրում են նաև Եղիշին: Գ. Զարբհանյանը, դեռևս անցյալ դարի կեսերին, այն կարծիքն է հայտնել, թե Մակաբայեցուց թարգմանիչը Եղիշն է: «Եւ գոր Եղիշայն ասէ,—գրում է նա,—և զայն ոչ մոռացայց, վասն սրբոյն Վարդանայ որ ի ձեռն զքաջ նկարագիրն առեալ զՄակաբայեցոցն, և յունկ զօրաց իւրոց լեղելէր, զհայ թարգմանութիւնն անշուշտ, զոր նորում սրբոյ Եղիշայի շարագրած բազումք ի հմտիցն կարծեցին»⁸⁴ Տողերի հեղինակն ուղղակի փաստեր չի բերում, այլ հիմնվում է միայն կարծիքների վրա, որոնց հեղինակները՝ «քազումք ի հրմսիցն», անհայտ են մնում: Ելնելով այդ կարծիքներից՝ Ս. Հարությունյանը փորձում է հաստատել որ, իրոք, Մակաբայեցուց գրքի թարգմանիչը Եղիշն է⁸⁵, որ այդ երկերի «կապը ամեն կասկածներից բարձր են կացուցանում»⁸⁶: Բնագրերի առանձին հատվածների համեմատության հիման վրա նա, որպես այդ գործերին հատուկ ընդհանուր ոճական օրինաչափությունների, նշում է գոյական հոմանիշների որպես հատկացուցիչ և հատկացյալ, բայական հոմանիշների հաճախ անցյալ դերբայի ձևով հարադիր գործածությունները, միևնույն իմաստը հոմանիշ բառով կամ առանձին նախադասությամբ կրկնելը, աշխարհաբարին մասն ձևերի և դարձվածների առկայությունը (հատկացուցչի նախադասությունը, որ հարաբերական դերանվան գի շաղկապի փոխարեն հանդես գալը), զ նախորդվ ետադաս հատկացուցիչը, երրորդ դեմքի փոխարեն առաջին դեմքի գործածությունը, նախադասությունների մասնությունները և այլն: Սակայն Ս. Հարությունյանը Ն. Բյուզանդացու մասն վճռական չէ, այլ երկբայում է: «...պարզ երևում է,—գրում է նա,—թե այս երկու գիրքը, եթե միևնույն հեղինակի գրչից չեն եղել, որ ըստ մեզ ճիշդ է, գոնե Եղիշն այնքան հմուտ է եղել Մակաբայեցուց գրքերին, որ իր պատմությունը

շարագրելիս Ս. գրքի լիեղև մասի լեզուն այնքան բնական կերպով հիսել է իր սեփականի հետ. հարկաւ այդ երկու անձինք, եթե միայն երկու են՝ առաջինի թարգմանիչը և երկրորդի հեղինակը, միևնույն դպրոցին պետք է պատկանած լինէին»⁸⁷: Ս. Հարությունյանի քերած օրինակները, որոնք իրոք ցույց են տալիս մասնություններ Եղիշի և Մակաբայեցուց գրքերի բնագրերի միջև, դրսևորումներն են լեզվաոճական այնպիսի երևույթների, որոնք, այս կամ այն չափով, հատուկ են նաև 5-րդ դ. մյուս բնագրերին: Սակայն այդ երևույթների համեմատաբար մեծ հաճախականությունը հիշյալ բնագրերում պայմանավորված է մասնավորապես բովանդակային ու պլոմետային մասնությամբ և արդյունք է, նախ և առաջ, ընդօրինակման, ինչպես և ճիշտ կերպով նշում է վերելում բերված քաղվածքի հեղինակը: Բ. Կյուլենբերյանը հավանություն է տալիս հայ մատենագրության մեջ հայտնի այն կարծիքին, թե Վարդանանց պատմագիրն օգտվել է Մակաբայեցուց նկարագրությունից, ապա ավելացնում է. «Բայց թե Մակաբայեցուց թարգմանիչը մեր ուսումնասիրած պատմագիրն է (այսինքն՝ Եղիշն, —Ն. Ա.), հավանականություն չունի. սա յայտնի է, որ Վարդանանց պատերազմի ժամանակ (451) Մակաբայեցուց գիրքը արդեն թարգմանում էր...»⁸⁸: Նա վկայակոչում է Գր. Խալաթյանին, որը նույնպես Մակաբայեցուց գրքերը համարում է աղբյուրներ, որոնցից Եղիշն քաղել է պատերազմի ընդհանուր գաղափարներ, պատմական պարագաներ և գործող անձերի նկարագիրը:

Ոճական մասնությունները դեռևս բավական չեն և բնավ իրավունք չեն տալիս Մակաբայեցուց գրքերի թարգմանիչ Եղիշին համարելու համար: Ոճական համագամանքներով հիշյալ գիրքը Կորնիլին կամ Եղիշին վերագրելու կարծիքներին հակադրվում է մասնություններն ու համընկնումները բանաբանությամբ ու ազդեցություններով բացատրելու կարծիքը, որը փաստերի տրամաբանությամբ առավել հիմնավոր է:

Այն, ինչ ասվեց վերևում, Մակաբայեցուց գրքերի թարգմանության ժամանակի և թարգմանչի վերաբերյալ, համոզեցնում է հետևյալ ընդհանուր եզրակացություններին.

ա) Հիմք չկա ենթադրելու, որ Մակաբայեցուց գրքերը մինչև Եփեսոսի ժողովը հայերեն թարգմանված չեն եղել:

բ) Մակաբայեցուց գրքերի թարգմանության առավել հավանական ժամանակը հայ թարգմանությունների առաջին շրջանն է, նախքան Եփեսոսի ժողովը:

գ) Եթե Մակաբայեցուց գրքերն առաջին շրջանում թարգմանված չեն եղել, ապա թարգմանված պիտի լինեն երկրորդ շրջանի սկզբում, Եփեսոսի ժողովից անմիջապես հետո, մուսավորապես մինչև

⁸² Նույն տեղում, էջ 93:

⁸³ Կորնիլ, նշվ. աշխ., էջ 10:

⁸⁴ Հ. Գ. Զարբհանյան, Յաղագս թարգմանութեան... Աստուածաշունչ տառից ի հայ բարբառ, «Բազմավեպ», 1851, էջ 234:

⁸⁵ Տե՛ս Ս. Հարությունյան, Եղիշի և Մակաբայեցուց գրքերի յարաբերութեան խնդիրը. «Արաբատ», 1896, էջ 553:

⁸⁶ Նույն տեղում, էջ 554:

⁸⁷ Նույն տեղում, էջ 555:

⁸⁸ Բ. Կյուլենբերյան, Եղիշե..., էջ 134:

440 թ., և թարգմանությունը չի հասնում մինչև 5-րդ դ. կեսը, այն էլ 7-րդ տասնամյակը:

դ) Կորյունը չէ Մակարայեցվոց թարգմանիչը, նրա «Լարբ Մաշտոցի» և Մակարայեցվոց գրքերի լեզվատնական բնդհանրությունները արդյունք են բանբարության և ազդեցությունների:

և) Կորյունն է բնդօրինակել Մակարայեցվոց գրքերի ոճերն ու դարձվածքները:

զ) Եղիշեն չի թարգմանել Մակարայեցվոց գրքերը, դրա թարգմանությունը Եղիշին վերագրելը նույնպես գիտականորեն չի հիմնավորվում, գրքերի ոճական բնդհանրությունները դարձյալ բնդօրինակվածն արդյունք են:

զ) Կորյունի, Ագաթանգեղոսի և Բուզանդի բնագրերի աղերսների պատճառներն ու հանգամանքները դեռևս հանգամանորեն բացատրված չեն:

Է) Մակարայեցվոց և Եվթադի թարգմանությունները, առանձին համընկնումներով և նմանություններով հանդերձ, սերտորեն չեն աղերսվում Կորյունի, Ագաթանգեղոսի և Բուզանդի երկերի բնագրերի հետ:

ը) Մակարայեցվոց և Եվթադի գրքերի թարգմանությունները նվազագույն աղերսներ ունեն և ոչ մի հիմք չկա դրանք միևնույն հեղինակին վերագրելու:

թ) Մակարայեցվոց գրքերի թարգմանիչը տակավին անհայտ է մնում:

